




ՀԱՅԲԱՐԱՐԵՐԹ

ՄԲ ՁԱԳԱՄՍԹ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 160

15 ՕԴՈՍՏՈՍ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ՏՕՂԱՑՈՒՅՑ

Օգոստ. 16	† Կիր. դձ.	Տօն Վերափոխման Ս. Կուսին Մարիամու :
17	† Բշ. ղկ.	Բ. օր »
18	Գշ. սձ.	Գ. » »
19	Դշ. սկ.	Դ. » »
20	Եշ. քձ.	Ե. » »
21	Ուր. քկ.	Չ. » »
22	Շք. գձ.	Է. » »

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ


Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ց

Խ Ա Ջ Ի Կ Վ. Ա Թ Ա Ն Ա Ս Ե Ա Ն

Տպ. «Կ. Արձագանգ» ի: Գիմ 3 դանկերան :

Կը վաճառուի Բերա, Պայրամ փողոց Թիւ 5

Կալաթա, Սեղբոս Խան Մխիթարեանց գրատունը :



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Չորրորդ տարի 15 Օգոստոս 1914 Թիւ 160

«Մերական Քառանկյապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Աւանդանոց շարքաբերքը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
ծարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնատուութեան համար
Մերական Հայրն սրագին կ'օրհնէ յիշեալ Շարքաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մեծի սէյ Վալի, առ Ամեն. Տ. Պօլոս Պետրոս Ժ.Ի. Թեղծած Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 թուանմարտ:

ՅՈՐԴՈՐ

ՊԻՈՍ Ժ. ՄՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԻ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐՈՒՆ

Մինչ գրեթէ ամբողջ Եւրոպան յափշտակ-
ուած կը տարուի յորձանքներէն դառնաղէտ
պատերազմի մը, որուն վտանգները, զար-
հուրելի աղէտները եւ աւաղելի հետեւանք-
ները ոչ ոք կրնայ խորհիլ առանց սուգի եւ
սարսափի, կարելի չէ որ մենք ալ ուժգին
կերպով չզգածուինք եւ մեր սիրտը կարելի
չխոցուի ամենազաւռ տրամութեամբ, քանի
որ այնքան քաղաքացւոց եւ այնքան ժողո-
վրդոց փրկութեան եւ կենաց հոգովը ծան-
րաբեռնուած ենք:

Իրաց այս տարօրինակ խառնակութեան
եւ ճգնաժամին մէջ՝ կատարելապէս կը զգանք
եւ կ'իմանանք թէ Մեր հայրախնամ գութը եւ
Առաքելական պաշտօնը Մեզմէ անհրաժեշտ

կը պահանջէ որ հաւատացելոց հոգին բարձ-
րացնենք դէպի հոն՝ ուսի եկեաց օգնութիւն.
այսինքն՝ առ Թրիստոս, որ է իշխան խաղա-
ղութեան ամենակարող եւ միջնորդ Աստուծոյ եւ
մատրիկան:

Ուստի յորդոր կը կարդանք որ Անոր շը-
նորհաց եւ ողորմութեան աթոռը դիմեն ամ-
բողջ աշխարհիս վրայ գտնուող բոլոր կա-
թողիկեայք, մանաւանդ կղերականք, որոնց
մանաւանդ պարտքն է, եպիսկոպոսաց հրա-
մանաւ մէն մի ժողովրդատիրութեան մէջ
հրապարակական աղօթքներ կատարել, որպէս
զի ողորմածն Աստուած քարեպաշտներու թա-
խանձանքներէն իբր պարտասած, պատերազմին
աղիտաբեր կերպարանքը փոխէ կարելի եղա-
ծին չափ փութով, եւ բարեգթութեամբ շնոր-
հէ վեհապետներու՝ մտածել խաղաղութեան
եւ ոչ թէ խռովութեան վրայ:

Վատիկանեան ապարանքէն:

2 Օգոստոս 1914

ՊԻՈՍ Ժ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶԻՈՒՆՔՆԵՐ

ԿՐՕՆԱՌՈՐԱՑ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Կ'ընդունինք հետեւեալը .

Գեր. Տիր Խնթազրապետ,

Քերտ, 10 Օգոստոս 1914

Առթիւ նորոնցիւր ապօրինի ժողովոյ, նոր
խնդիր մը կը յուզուի ունակ քով. կը փափա-
քի որ անոր կարճատոս մեկնութիւն մը հա-
ճեիք տալ, ի հանդարտութիւն մեաց:

Կ'ըսուի թէ Հոգեւոր Իշխանութիւնը պար-
տաւոր է Քահանաներու որ չնամակցին այդ
Ժողովին: Որ եւ իցէ ուղղախոն մեկու մը հա-
մար շատ բնական էր այդ եւ եկեղեցական ոգ-
ւոյ ալ կարի վայելուչ: Բայց խնդիրն այս է թէ՝
արդեօք ի՛նչ իշխանութեանք է որ Մխիթարեան
կրօնաւորներուն եւս կ'ուզուի հրամայել այս
տեսակ խնդիրներու մէջ, իսկ որ անոնք ան-
կախ են տեղական հոգեւոր իշխանութենէ, ու-
նին իրենց պետք, փակել, կանոնը, Մեծաւորը,
Արքանայրը, եւ պարտաւորուած չեն հնազան-
դելու տեղական Եպիսկոպոսին, ինչպէս աշխար-
հական քահանայք: Ասոր անուն կուտան կոր
«Ազատութիւն» կամ գերծ ըլլալ իշխանութենէ.
եւ գաղղ, Exemption, եւ կրկին Մխիթարեան-
քեանց Մխիթարեանքն եւս կը պնդեն, որչափ
կրցայ վերահասու ըլլալ, թէ՝ իրենք, իր կրօ-
նաւոր, ազատ են Հոգեւոր Պետեւոր իշխանու-
թենէն, եւ միայն իրենց Արքանայրը կրնայ
իրենց պարտաւորել ու եւ հրաման ընդ պար-
տաւոր հնազանդութեան. միեւն իսկ այս խնու-
տոյ հարց-պատասխան տեղի ունեցնել է նաեւ
Քահանայապետական Նուիրակին հետ. եւ կ'երե-
ւի թէ ան ալ գրեթէ համահունքութիւն յայտնած
ըլլայ այս վերջին կարծիքին. գո՛նէ ատանկ
խօսք մը կայ:

Հետեւաբար ունակ անտեղի կը գտնեն միե-
ւն իսկ կը պահարարեն Հոգեւոր իշխանու-
թիւնը, որ ո՛չ միայն իշխանութեանք կը հրա-
մայէ կրօնաւորներու, այլեւ անհնազանդները
կը պատժէ:

Ուսի. խնդրեմ, հաճեցե՛ք գոհացուցիչ պա-
տասխան մը շնորհել, որ այս քաներուս դժգո-
հութեանք հանդիսանաւ եղող աշխարհականքս
ալ յուսաւորութիւն ու շինութիւն:

Յարգանաց հաւատածով եւ

Գեր. Տեառնդ

Պ. Կ.

Ինչպէս նամակագիրը կը խնդրէ, համա-
նօտիւ կ'ուզենք լուսարանել այս կարեւոր
կէտը:

Առ այժմ՝ Սիւնհոդոսական վճիռներէն
անկախաբար, պիտի յիշեցնենք միայն Ս.
Աթոռոյ բացայայտ ու բացարձակ մէկ վճիռը,
որ տրուած է Տար. Հաւատոյ Ս. Ժողովէն
ի 22 Փետր. 1877:

Արդ այս վճռագիրը գոր Ս. Քահանայա-
պետն «Ճոխութեանքն իւրով հաստատեաց եւ...
օրհնարել հրամայեաց», տրուած է առթիւ
ընդհանուր Ժողովոյ Մխիթարեան Հարց Վե-
նետոյ, որպէս զի այն «Միանձուկ, առաջ-
նորդեալ իշխանութեանքն նորին Առաքելական
Աթոռոյ եւ պաշտպանութեանքն պատասխարեալ,
զանկնայն պայտան գործոց իւրեանց պաշտ-
ճեցնել եւ յօրհնեցնել ըստ օրինակի սրբոց կա-
նոնաց եւ Առաքելական սահմանադրութեանց,
եւ պաշտօնն իւրեանց օգտակար լիցի Կարողիկէ
եկեղեցոյ եւ փրկութեան հոգեւոր»:

Այս վճռագրոյն Ա. յօդուածը այսպէս է .
«Քանզի ըստ հասարակաց եկեղեցական բարե-
կարգութեան՝ որ ակաւին գործ յԱրեւելս, մե-
նաստանք եւ միանձուկ հպատակ կալ պարտին
Եպիսկոպոսին, եւ ոչ երբեք վայելեն զառանձ-
նաշնորհութիւն ազատութեան որ յԱռաքելական
Աթոռոյ շնորհեալն է Կրօնաւորական Կարգաց
հանդիսական ուխտադրութեանք կապելոց եւ ի
նմանէ իսկ հանդիսական պայտանաւ հաւանե-
լոց, Ս. Ժողովս յայտարար, թէ՝ Մխիթարեան
միանձուկ ոչ բնաւ վայելեն զազատութիւնն ի
վիճակաւորաց տեղեաց եւ թէ հպատակ են իշ-
խանութեան եւ իրաւաբանութեան Եպիսկոպո-
սաց վիճակացն՝ յորս բնակին»:

Այս յօդուածէն կը հետեւի թէ՛

1. Կրօնաւորական Կարգաց Ազատութեան
համար ո՛չ միայն անպատճառ կ'ենթադրուի
Հանդիսական Ուխտադրութիւն, այլ նաեւ կը

պահանջութի մասնաւորապէս, որ այն Կարգերը Ս. Աթոռէն հանդիսական պայտանսու հաւանեալ ըլլան:

2. Այդ Ազատութիւնը կը շնորհուի Առաքելական Աթոռէն:

Այն կը զօրէ մանաւանդ Արեւմտեան Եկեղեցւոյ մէջ:

3. Սակայն ըստ Արեւելեան Եկեղեցւոյ բարեկարգութեան, որ տակաւին ի զօրութեան է՝, թէ՛ վանքեր (skēn) և թէ՛ միանձուք (անձեր) պարտաւոր են հպատակելու Եպիսկոպոսին, և ո՛չ երբեք կը վայելեն Ազատութեան առանձնաշնորհութիւնը:

4. Հետեւաբար Ս. Աթոռը կը վճռէ թէ Միաթարեան կրօնաւորները բնաւ չեն վայելեր ազատութիւն՝ տեղերու Վիճակաւորներէն, և իրենց բնակած թեմերուն Եպիսկոպոսաց իշխանութեան և իրաւաբանութեան հպատակ են:

Յիշեալ Վճռագիրը քանի մը մանրամասնութեանց ևս կ'իջնէ, զորոնք սակայն զանց կ'առնենք, խնդրոյս՝ կարեւոր չըլլալուն համար:

Ուրեմն յայտնի է թէ Միաթարեան և արեւելեան կրօնաւորներն առհասարակ պարտական են հնազանդիլ տեղւոյն Եպիսկոպոսին, ինչպէս թեմական քահանայք. Վիճակաւորը միայն իրենց ներքին կրօնաւորական կանոնաց վրայ տրամադրութիւններ չի կրնար ընել. ուրիշ ամէն բանի մէջ հպատակ են սնորհ. Նա իշխանութիւն ունի այցելութեան թէ տեղւոյ և թէ անձանց վրայ, ինչպէս զպրոցաց և աշակերտաց, ճիշդ այնպէս՝ ինչպէս իր թեմին որ և իցէ եկեղեցեաց, հաստատութեանց և կղերց վրայ, լիովին իրաւաբանութեամբ նաև եկեղեցական պատժոց, որ ունին իրենց կատարեալ զօրութիւնը:

Հետեւաբար անտեղի է ենթադրել իսկ որ Միաթարեանք, ևս առաւել Գեր. Նուիրակը անգիտստնան այս կանոնը. այս ենթադրութիւնը յերևարանք է:

Այսպիսով կարծենք կը լուսաբանուի խնդիրը, որչափ պէտք է:

Հին ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒՑ ԴԷՄ

(1827 — 1830)

Ճուճաւ իրքեսի 25. — Տիւղ զատէ Պօղոս չէլէպիի Իւսկիւտարա կէչիրտիլէր Բէօթահէ եայա նէֆ տէյիւ, Ֆէրմանընտա ևազըլան թաֆսիլաթը պու. Օլան քարտաշլարընըն մապէյնինտէ քէնտի քիւչիւկ օլուպ, օնլարա իթաաթլը օլմատըղընտան. սիւրկիւնիւ մինասիպ կէօրիւնտիւ: Օ իսէ Բազազըն ֆէնտի պու օլտու քի քէնտինէ մուզայիր օլտուղու իչին իտի: Պու պապտէ իքթիզա էթտի արայա պիր Փըքրա կէթիրմէք. զէման ըլա չօպան քէօփէյի զիտտէ հազլատըղընտա. չօպան սօրուչ իթմիշ. Նէ՞ պու քըյամէթ. հայքըրըշ. քէլի տէմիշ. քուրու քաչըրըյօրում. տէֆա չօպան սօրար. եա պէն պազը սէս տէ ալըյօրում սէնաէն, օ նէ՞ օլմալը. ճէվապ էտէր քէլփ. պէն տէ օնտան քօրքտուղումտան էօթիւրիւ տիւր:

Պու ճուճաւ իրթէսի Փաթրիք Նարըլտա մահպուտա քալան 4 գարըլարը տա էզատ էթտի պու թէնպիհ իլէ. օլմայա պիր տահի արզուհալ վէրէսինիզ. եօզսա սիզի միւճմիւհալ իտէրիւ:¹

Բազաւ իրքեսի 27. — Բազազլար թէքըրաթէն չարըյա չըքըպ, քիմինի տիւքեանտան, քիմինի էվինտէն թութուպ կէօթիւրտիւլէր, իսիմլէրի պունլար. Չօպան օղլու Սիմֆէշ Մկրտիչ վէ էվատլարը Թուճաճան իլէ Անտօնու, Էնքսէրճի օղլու Բիրքօրու, Բիւփէլի Պօղոսիկի, Չամիշ օղլու փէփէ Արթին իֆրազճը տամատընը, Լապ Պեսրոսու, Բիրլի օղլու իւշ քաքտաշլար Արթին, Անտոն վէ Ակօրու, Թափուքճու օղլու Սրապը, Բարաքաշ Յուսէփի, Շէհրեան Սիմֆէշ Միքայէլի, Թէրզի Անտոնու վէ քարտաշը թէլալ

Պողոսու, Մինաս օղլու Մըքայէլի, Արապ օղլու Սիմքէշ Հովակիմի վէ իքի էվլաուէ-րինի Պողոս իյէ Յուսէփի, Սօսիք օղլու Անտոն էվլաուր սաաթճը Ակօրու, Չէմպէրէքճի օղլու Պողոսու վէ Սիւզէնիճի փաղէն Բիրքորու. պուսլարըն հէփսինի միւքսիւր աղա-յա էնտիրտիւէր:

Զարչանկա 29.— Զօպան օղլու Մկրտիչի 2 էվլաուր էվ ուշաթլարընլա սիւրտիւէր Զօրունա, Լազ Պետրոս իւէ Բիրլի օղլուլարընը տա Զօրունա, Զամիշ օղլու փէփէ Արթինի՝ Բըր շէհիրէ, Թավուքճու օղլու Սրապը վէ Մըքայէլի, Բիւփէլի Պողոսիկի, Էքսէրճի օղլու Բիրքորու վէ Արապ օղլուլարընը Ալանիայա, Չէմպէրէքճի օղլունու, Մինաս օղլունու, Սիւզէնիճի փաղէն Բիրքորու, Թէրզի Անտոնու վէ քիւրքճիւ Օհաննէսի Նէվ-շէհիրէ, Թարփօշճու օղլու Շէհրեան Օհաննէսի, Գարաքաշ Յուսէփի, Միսքճի Ստեփանը վէ Սօսիք Ակօրու Լատիքայա, Թէլ-լալ Պողոսուն հագգընա ըէճա օլտուղու իյին չըքարտըլար միւքսիւր աղատան վէ արա վէրտիւէր պիր քաշ կիւն տիւշիւնիւպ իշինի պիթիրմէյէ վէ քիլիսէյէ վարապ խոստովա-նանք օլմաղա:

(Շարունակելի)

1 25 Նաքար.— Պողոս Չէլէպին մուպաշըրով վե-րուցին եւ Գէօթահա աքսորեցին եւ Ֆէրմանին մէջը դըրուած յանցանքը ածա ձեւով էր. իրմէ մեծ եղօրը իթաաթ չունի, ինքնագլուխ ըլլալով հա-զանդ չէ, եւն:

Իւ այսօր մնացած Նաուը յափուլէն հաստա-լարին մէջի եղած կնիկները թող տուին:

Մաղար օղլու վիշէնին, Պէրէյի ուղուին, Էր-կան օղլույի մասլահաթներուն մէյմէկ սարաֆ Թա-յին ըրեր էին, նայեցան որ առ ճամբով պիտի չի լինայ յետոյ ճամբան դտան, ու խիլիւսիւ Ահմէտ էֆ.ին իհալէ ըրին:

Եետոյ թընկըր Սիմօնին տղաքը մէկ ճամբով մը իրենց գործքը, Հաճի Եուսուֆ էֆ.ին իհալէ ք-նիլ տուին, որ առ ժամանակը էվլաֆ նաղըրը էր. թընկըր Յակոբին տղան Միքայէլը Բուճէլի վալի-սինի քովը ըլլալով, հայրը քշուեցաւ նէ հոս չէր, առ միջոցիս մէջ բերել տուին, ասոր գործքն ալ առ մարդուն իհալէ ըրին որ տեսնայ:

Այս միջոցիս մէջ Տավուտ Արթինին կնիկը խոյպ եղաւ, մարդ կարող չեղաւ իմանալու, փախաւ մի դուրս, չէ հոս է մի պահուած. կնկանը եղբայրը որ

Զարֆճի Պետրոսը ըլլալով Հայու ժամ դացեր էր վախցաւ քրոջը փախչելէն գնաց Պատրիարքին ը-սաւ. քուրս փախեր է յետոյ իզմէ մի փնտռէք, ի-րաւ իմ քովս էր քայց շատոնցմընէ ես տուըն չէի երթար. անոր ամէն բանը Տավուտ Պետրոսը կը տեսնար, հէլպէթ ան փախցուցեր է կամ թէ դիտէ ուր երթալը: Պատրիարքը կ'ըսէ. հայտէ դնա դու բանդ, քեզի մարդ բան ըսող չի կայ: Հայք կը մտածեն այս վէսիւլէյով Տավութին տղան բան մը ընենք որ Թապիլէթովը աքսորուի, Պատրիարքին մարդ կը խաւերին Բիշմիշին եէկէնը Օհաննէսին, մէկ Թախիւրպով մը Պետրոսը Պատրիարքարանը բե-րէ. կ'առնէ Յովհաննէսը կը տանի Պատրիարքա-րանը, անկից ալ մէկ ժամկոցով մը կը խաւերն բա-շային դուռը ըսելով. դունէն քեզ կ'ուզեն կոր, ինչ բան ըլլալը չիտենք, կը տանին դուռը ըյշիս քէսէտարիին առջեւը, էֆ.ն կը հարցնէ. Տավութ Արթինին կնիկը դու փախուցե՞ր ես, հէմ անոր ամէն գործքն ալ դու կը տեսնաս եղեր, շիտա՛կ ըսէ, ո՛ւր փախուցիր: Տավութը կ'ըսէ. Հաշա՛ էֆէնտիմ պու քիրի դաւալու էթմէմ, գաչսամ պէն գաչարըմ, օ-նու նի՞չին գաչըրաճաղըմ, կէրչի իշլէրինի պիզ կէօրիւրիւզ, գալար քի պու շէյտէն խապէրիմ եօզ, Փազաթ գուլուլն տա տուլտուլմ պուշու, պիզպէն արամայըն պուշու, գիրա պուրտա գարտաշը վար, վալիտէսի վար, օնլարտան Թաստիք պուլուրուն: էֆ. կ'ըսէ. Եթադիպ էտէրիմ, էյէր Թագսիրաթ սէնտէ չըգարսա սօնրա սէնի թէքտիր իտէրիմ: աս մարդս ըյշիս քէսէտարի ըլլալով Հայք ինչպէս պէտք է շիներ էին, յետոյ Տավութը կ'ըսէ. «Է-ֆէնտիմ Թասհիհ պուլուրուն, էյէր պէնտէ Թագ-սիրաթ չըգարսա թէքտիր էտին, լաքին պէնիմ խա-պէրիմ եօզ, սիզի մէպալտէն սագընըրմ: էֆ.ն կ'ըսէ. «Շիմտիլիք աշաղտա պիր գաշ կիւն էյլէն»: Կը տանին միւշիւր աղան բանտը կը դնեն, գրեթէ ութը օր մը մնաց, յետոյ Զարֆճի Պետրոսը եւ Տա-վութը միատեղ էֆ.ին առջեւը մուտաֆա եղան, Տավութը վաստկեցաւ եւ հասկցուեցաւ որ չունի Տավութը խապահաթ. յետոյ հոն Բիշմիշ օղլու Մի-քայէլը կը գտնուի, էֆ.ին կ'աղաչէ որ թող տան Տավութը, եւ այսպէս ազատեցաւ: Բիշմիշին հոն դտնուիլը սատանուլթիւն էր, եւ աղաչելով աղա-տիւն ալ չի հասկցուի թէ իրե՞նք ընել տուին, ճիշդ հէմ կ'ընէին, հէմ չիմացուի ըսելով այս ճամ-բան կը բռնէին, ըսելով տէրուլթիւնը կ'ընէ կոր:

Իընճը օղլու վիշէնին վրայ ալ այսպէս բան մը կ'ընէին կոր, այս ժամանակը նոր քէհեա պէյը Հաճի Սաիտ էֆ.ն էր, առաջուց ասոնք էին ստակ բռնողը գնաց վիշէնը հասկցուց, յետոյ պատրիար-քարանը գնաց, իմացան Հայք թէ քէհեա պէյը տէ-րուլթիւն կ'ընէ կոր եաղնուշուլթիւն է եղեր ըսե-լով թող տուին:

2 27 Բշ.— Այսօր վերուցին այս մարդիկը տա-րին միւշիւր աղան բանտը որք են այսօրիկ. Զօ-

պան օղլու Մկրտիչը եւ երկու զաւակը, Թուֆաճանը եւ Անտոնը, Էնքսէրճի օղլու Գրիգորը, Զամիչ օղլու փէփէ Թարութիւնը, Լազ Պետրոսը, Գիրի կամ Միւհիպեան երեք եղբայրք՝ Անտոնը, Արթինը եւ Յակոբը, Թավուխճի օղլու Սրապը, Խարախաշ Թուսէփը, Շէհրճեան Զովհաննէսը, Միսճի Ստեփանը, Թավուխճի օղլու Միքայէլը, Արապ օղլու Յովակիմը եւ երկու զաւակը՝ Պողոսը եւ Յովսէփը, Խօտիկ օղլու սահաթճի Յակոբը, Զէմպէրէքճի օղլու Պողոսը, Սիւզէնիճի փաշէն Գրիգորը, Գիւլփէլի Պողոսիկը:

25 Դշ.— Այսօր զատուք աքսորեցին. Գիւլփէլի Պողոսիկը, Էքսէրճի օղլու Գրիգորը՝ Ալանիա, Զոպան օղլու Մկրտիչը եւ երկու զաւակը եւ Ֆամիլեան ալ իւրպէս ըրին՝ Գըր 25-ին, Լազ Պետրոսը եւ Միւհիպեանք երեք եղբայրք՝ Գըր 25-ին, Զամիչ փէփէ Թարութիւնը՝ Գըր 25-ին, Թավուխճու օղլու Սրապը եւ Միքայէլը՝ Ալանիա, Զէմպէրէքճի օղլու Պողոսիկը, Միսաա օղլու Միքայէլը, Սիւզէնիճի փաշէն Գրիգորը. Թէրզի Անտոնը եւ քիւրքճի Թհաննէսը՝ Ընքզլը, Խարբօշճու օղլու Սահաննէսը, քի Շէհրճեան ալ կ'ըսուի, Գիւլքճի օղլու Թուսէփը, քի Գարապաշ կ'ըսուի, Միսճի Ստեփանը եւ Խօտիկ օղլու սահաթճը Յակոբը՝ Լատիկ, Թէլլալ Պողոսին համար րէճա ըրին Պատրիարքին, Ժամանակ տուին քանի մը օր որ երթայ Ժամ ու խոստովանանք ըլլայ ըսելով, հանեցին տարին միւշիւր աղային, Թոշ տուին. Արապ օղլու Յովակիմը եւ երկու տղան Պօղոսը եւ Թուսէփը՝ Ալանիա:

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՒ՝ ԳՐՔԷՆ

ԳՐԻԿ Ա.—ԳԼ. ԻԲ. — Մարգկային քուսառութիւնք

խորհրդածելու վրայ:

(Շար.)

Ինչո՞ւ յառաջադրուիմք կ'ուզես որ աւուր ձգձոգեմք: Ե՛լ կանգնե՛, եւ անշաղկապ սկսե՛ ու ըսե՛. հիմա Ժամանակն է գործելու, հիմա Ժամանակն է կռուելու, հիմա յարմար Ժամանակն է ինկզիմիս ուղղելու: Երբ վշտաց ու նեղութեանց մէջ ես, ա՛ն անեմ Ժամանակն է արդիւնք շահելու:

Պէտք է որ անցնիս կրակին ու յուրեմ, հանգստեան հասնելէ առաջ:

Եթէ ինկնիս թուրքիւն չընես, մոլորութեան լայիօ՛ յաղթես:

Յորքան այս սկսար մարմինը կը կրեմք, յեմք կրնար առանց մեղքի ըլլալ, եւ ոչ առանց ժամանութեան ու ցաւի կեանք վարել:

Յանկայի է մեզ հանգիստ առնուլ ամեն խեղճութեան. քայց որովհետեւ մեղքով կորուսիմք անմեղութիւնը, կորուսիմք նաեւ ճշմարիտ երանկութիւնը:

Հետեւաբար հարկ է որ համբերութիւն ընենք ու սպասենք Աստուծոյ ողորմութեան, միկնել որ անցնի այս անօրհնութիւնը ու մահկանացութիւնը կյանքի այն կեանքին:

Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ԼՈՅՈՂԱՑԻ

Ս. Իգնատիոս անդուգակուն խոհեմութեամբ և սրբութեամբ կը կառավարէր իր ընդարձակածուալ Միաբանութիւնը: Աստուած անոր տուած էր հաստատմանութեամբ խառն քաղցրութիւն մը, որով կ'ուզէր առանց զայրացնելու և կը յանդիմանէր առանց վերաւորելու: Հռոմի մէջ ամէն տեսակ լիշտառներու օգնելու համար ըրած բարեքները այնքան շատ են, որ զանոնք պատմելու համար ամբողջ հատոր մը պէտք է: Այն տեղ տուն մը շինել տուաւ դարձի գայիք հրեաներուն համար, և ինք տնձաւոր դարձի բերուա շատ հրեաներ որոնք խանդավառութեամբ ընդգրկեցին կաթողիկէութիւնը: Ինք ուրիշ խեղճութիւններու ալ օգնութեան հասաւ: Հոգ տարաւ աղջիկներու, որ իրենց խիստ աղքատութեան կամ տնտեսութեան և կամ վատթար կրթութեան հետեւածքով աշխարհի վտանգներուն ենթակայ էին. և ասոնց համար շինեց Սրբուհի Կատարինէի վանքը: Շատ հոտատուութիւններ հիմնեց ի նպաստ երկսեռ սրբերու, որոնք մինչև այն ատեն բոլորովին լքուած էին և զրկուած իրենց կարեւոր հոգեւոր և մարմնաւոր օգնութիւններէն: Ինք հիմնեց նաեւ գերմանական վարժարանը, որուն համար տնհաւատալի եւ անդամ աշխատեցաւ, համազօրեւած ըլլալով որ անկարելի է կաթողիկէ կրօնքը Գերմանիոյ մէջ վերահաստատել, եթէ հոգ չտարուի Հռոմի մէջ կրթելու նոյն երկրին զաւակները, որպէս զի երթան ապա կառավարեն ժողովրդապետութիւնները և եպիսկոպոսութիւնները և կրօնքը պաշտպանեն Եկեղեցւոյ թշնամիներուն դէմ: Ինքն է նաեւ Քառասունժամեայ (Quarante—Heures) աղօթքներուն հաստատողը:

Յիսուսեան ընկերութեան մեծ տնուն Հիմնադիրը վախճանեցաւ վաթսուներեքնոց տարեկան: Այն միջոցին իր կարգը տասուերկու քառասուն ժամուած էր և առնուազն հարիւր վարժարան ունէր: Իր աշակերտներէն շատերը արդէն իրենց արիւնը թափած էին Յիսուսի Քրիստոսի համար. շատերն ալ մեռած էին Աւետարանը քարոզելու, անհաւատները մկրտելու, հրեաներէն շատերը արդէն իրենց արիւնը թափած էին Յիսուսի Քրիստոսի համար. շատերն ալ մեռած էին Աւետարանը քարոզելու, անհաւատները մկրտելու, հրեաներէն շատերը արդէն իրենց արիւնը թափած էին Յիսուսի Քրիստոսի համար:

Իր մարմինը նախ թաղուեցաւ մայր վանդատան եկեղեցւոյ մէջ աւագ սեղանին տակը, Աւետարանի կողմը: Ապա իլ ձէզաւ կոչուած նոր եկեղեցին փառաբանեցաւ: Սուրբ հաստատուեցաւ 1622, Մարտ 12ին, Գրիգոր ԺԵ-ին կողմէ: Ս. Իգնատիոս ընտրեց սե-

բունդ մը թողուց որ կը շարունակէ աշխարհի ամէն
կողմը կործանել կուսպաշտութիւնը և հերետիկոսու-
թիւնները, բարւոքել Բրիտանիոյ բարքերը, դաս-
տիարակել տղաները, սորվեցնել տգէտներուն, այցե-
լել բանտերն ու անկեղանոցները, օգնել աղքատներուն
և հայթայթել քրիստոնէայ աշխարհին ուրիշ անթիւ
անհամար բարեքներ:

Վ Ե Ր Ջ

ՀԱՒԱՏՈՅ ՄԻ ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԲՕԼ ԼԷՕՎԸՆԿԱՐՏ

Գ.

1898ին կը ծագի Տրէյֆիւսի խնդիրը. մի
կողմանէ հակասեմականք իրենց պարապլուխ
ունենալով Տրիւմոն, Կէռէն, Մութոն և
Մաքս Ռէժիս, ահաւոր պայքար մը կը մղեն
ընդդէմ հրէից, միւս կողմանէ Տրէյֆիւսի
կուսակիցք կը շուրջ կ'ընեն խաթամութ ամ-
բոխին հակակղերական կիրքերուն եւ կա-
տաղութեան. ու այսպէս երկու եղբայրտու-
պան բանակներու կը բաժնուի Փրանսո:

Բօլ կը վերաւորուի իւր ազգասիրական
զգացմանց մէջ, պէտքը կ'զգայ մօտենալու
իւր կրօնակիցներուն, եւ նա որ ուարինքէ
ի վեր անկրօնութեան մէջ կը թափառէր
կը սկսի յաճախել ժողովրդանոցը եւ ներկայ կը
գտնուի աղօթից եւ արարողութեանց: Ան-
ջնջելի ցեղի մը հրաշալի պատմութիւնը,
Սաղմոսաց սրտայոյզ աղաղակները, մարգա-
րէից վսեմ ու աստուածային շեշտերը խորին
տպաւորութիւն մը կը թողուին իւր բանաս-
տեղծական հոգւոյն վրայ:

Գալով Աստուածաշնչի հիմնական սկզբանց
ու վարդապետութեանց, կը դիտէր նա,
— ինչպէս կը գրէ անկողմնակալօրէն, — թէ
«ժողովրդանոցը կը հաստատէր զանոնք բայց
չըթամք, ու ո'չ սրտիւ: Իմ խօսակցու-
թիւններս Պ. Ալֆրէտ Լէվիի հետ (այն ատեն
յարբուհի Լիոնի, այսօր բարունապետ Փրան-
սոյի), ինձ փոխ տուած գիրքերը, իրմէ
լսած քորուկներս շուտով հասկցուցին ինձ
արդի Իսրայելի հաւատքը:

«Այս հաւատքը ճշմարիտն ըսելով լոկ
ազգային հաւատք մ'է: Մեր արեւմտեան

բարոնիք եւ Իսրայելացիք կը պահեն հրէու-
թենէ՝ իւր հպարտութիւնը, իւր ժամանակա-
ւոր փառասիրութիւնները, ատելութիւններն
ու ռիսակալութիւնները: Ասկէ զատ, իրենց
ազատամտութիւնը կ'ընդունի ամեն մեկնու-
թիւններ հակառակ Աստուածաշնչի ինչպէս
եւ Դաւմուդի, հակառակ Մովսէսի ոգւոյն և
ուղղափառ Հրէութեան:

«Պ. Բարունապետն աստուածեան է թէ
համաստուածեան: Չկրցայ երբեք դրականա-
պէս լուսաբանել այս խնդիրը: Ինչ որ գի-
տեմ ապահովապէս, այն է թէ չի բանադրեր
բնաւ Սքինոզան, ո'չ մի գապալիսդ եւ ո'չ
իսկ անշուշտ Հանրի Հայնէն: Փրանսոյի բա-
րունապետն ազատամիտ մըն է: Իւր հաւա-
տացեալք կը գովէին ինձ իւր ազատամտու-
թիւնը: Ինչ է ազատամտութիւնը: Նա
կրօնի մէջ է ինչ որ է ընտրապաշտութիւնը
(éclectisme) իմաստասիրութեան մէջ եւ յա-
ռաջդիմականութիւնը քաղաքականութեան
մէջ. այսինքն հակառակները միացնելու,
անհաշտելին հաշտեցնելու, բանապաշտու-
թիւնը եւ հաւատքը, հաստատութիւնը եւ
ժխտումն, կարգն ու անկարգութիւնը, սա-
տանան և Աստուած հաշտեցնելու միջոցը:

«Ազատամիտ բողոքականութեան նման,
ազատամիտ հրէութիւնն եւս կրօնք մըն է:
Կրօնի ինչ ինչ շարժումները, ինչ ինչ դիր-
քերն ու խօսքերը պահած է: Բայց հիմամբ
ազատասիրութիւն մըն է ծպտեալ, բանա-
պաշտութիւն մըն է զիմակաւոր, ինչ որ ա-
մենէն անախորժ բան մըն է անկեղծ ու
տրամաբան մտքի մը համար:

«Ինչ է Մեսիան ըստ ժողովրդանոցին:
Օր մը այս հարցումն ըրի Պարոն Բարունա-
պետին: Շփոթեցաւ վայրկեան մը, յետոյ
պատասխանեց. «Մեսիան Արդարութեան
յաղթանակն է, Ազատութեան եւ Եղբայրու-
թեան թագաւորութիւնն է: Այս թագաւո-
րութիւնն սկսաւ Փրանսական Յեղափոխու-
թեան հետ...» (*):

Աւափել թէ ո'ւր հասած են այսօր աս-
տուածասպան ժողովրդին հոգեւոր պետերն,

(*) La Splendeur Catholique, p. 98—99,

որոնց համար կրօնք կը նշանակէ անկրօնութիւն, եւ ճշմարտութիւն պրիթէ հոմանիշ մըն է ստույթեան: Ստուգիւ տխուր ու ողբալի է այս, և արժանի Երեմիայի մը բոլոր արցունքներուն:

Սոյն կարեւոր յայտնութիւններէն վերջ, ապացուցանելու համար թէ Պ. Ալֆրէտ Լէ-վի բացառութիւն մը չէ հրէից մէջ, եւ թէ առ հասարակ ուրիշ բարեւոյններ եւ մասաւորական հրեաներ նոյնչափ ու աւելի տգեղ մեկնութիւններ կու տան Մեսիայի, կը յիշէ Լէման եղբարց պրիթերէն օրինակներ և ահուհներ, որոնցմէ յայտնապէս կ'երեւի թէ Հին Կտակարանը սոսկ ազգային յիշատակարան մըն է արդի հրէից համար, եւ ո՛չ թէ ներշնչեալ ու աստուածային մատեն մը, ուր անվրէպ ճշմարտութիւններ, երկնային պատգամներ, անթափանցելի խորհուրդներ կը բովանդակուին Ենովայի փառաց եւ աշխարհի փրկութեան համար:

Անոնց որք կը հետաքրքրուին կրօնի հարցերով՝ կը փութանք յանձնարարել ընթերցումն սոյն հոգեւից և բազմաճանաչ հեղինակաց(*):

Ո . Կ . Ա .

(*) La question du Messie et le Concile du Vatican, Paris, Joseph Albanel, Libraire, édition 1869.

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍՎԶԲԱՆՑ ՎՐԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՆԻԹ Ի ԵՆ ԵՆ ԵՐ (*)

Ձ.

«Քեզի պարտ ունեցող աշխատանքին վեցեր մի՛ աւելցնեք»,
«Վճարէ՛ք բանուորին իւր աշխատանաց վարձքը:»

«Վճարէ՛ք բանուորին իւր աշխատանաց վարձքը:»

(Շար.)

Երբ մարդ մը քեզի համար կ'աշխատի, կ'ըսէք իւր որդւոյն առաքինին Տովրիթ, անմիջապէս վճարէ՛ իրեն ինչ որ անոր իրաւունքն է, և վայրկեան մ'ալ վար մի՛ դնեք

բանուորին վարձքը: Արդարութեան և մարդասիրութեան դէմ ոճիր մի է, արուեստաւորին աշխատանաց վարձքին վճարումը յապաղելը, կամ զայն հուազեցնելը, և կամ զլանալը: Սուրբ Գիրք այդ մարդը մարդասպանի կը հաւասարէ. «Որ հեղու զարիւն, եւ որ զրիւնս առնէ վարձկանի՝ եղբարք են»: (Եկեղեց. ԼԴ. 27): Այս մեղքն վրէժխնդրութիւն կը գոչէ: Անիրաւ և բարբարոս մարդ, ո՛րչափ ժամանակէ ի վեր է որ, քու զրանդ առջեւ կը հալի ու կը մաշի այդ խշուռ արուեստաւորն: Այն, զոր դուն իրեն կը պարտիս, իւր աղքատ ընտանիքը մոռցնալու, իւր աշխատութիւնը շարունակելու, և կամ զինքը նեղը դնող պարտաւորով մը ունեցած պարտքը վճարելու պիտի ծառայէր: Բայց դուն իրեն աղաղակներուն առջեւ անզգայ կը մնաս, վասն զի քու աչքէդ երևելու և քու բարկութեանդ ներքեւ իյնալու վախը իրեն կ'արգելու՝ արդարութեան միջոցները քեզի դէմ գործածելու: Եւ եթէ պարտաւորի վերջապէս ասոր դիմել, այն ատեն դուն քու վարկիդ կամ խաբէութեան ամէն զսպանակները շարժման մէջ կը դնես, ինքզինքդ անոր կարի արգար սահասանութիւններէն ազատելու, և անոր ձեռքերը կապելու համար: Անտեսանելի կ'ըլլաս քու ամէն պարտատէրերուդ և կամ ահոնց միշտ անօգուտ խոստումներ կ'ընես, որոնք, ըստ իմիք, կը նմանին այն մէջը զատարկ արձաններուն, որոնք միշտ միեւնոյն ընդունայն ձայնը կը հանեն: Դուն զահոնք ամէն ամիս, տարիէ տարի կը սպասեցնես, և բարեբաղդ ևս պէտք է ըլլան, եթէ զանոնք խոստութեամբ և սպառնալիցօք չվճնես:

Ենթիկոս Դ. բարի թագաւորն, այնչափ արժանի այն գահին, որուն բարձրանալու համար այնչափ նեղութիւններ կրեց, այս նիւթիս վրայ, օր մը, կարի նշանաւոր դատ մը տուաւ: Իւր ի Բարիզ մտնալէն յետոյ, Տը լա Նու անունով ազնուական պոլիտականին կառքը ձիերով հանգերձ գրաւել տուին իւր պարտատէրերն: Այս սպայն թագաւորին զանգատեցաւ: Կա Նու, ըսաւ իրեն թագա-

(*) Ցեւ թիւ 155. էջ 439:

ւորն հրապարակաւ, Հարկ ե որ խեղճանքիս
ոք խո պարտքը վճարե, ես ալ իմ պարտքերս կը
վճարեմ կոր. Ապա զայն մէկ կողմ քաշելով,
ըսաւ իրեն. Ահա՛ ա՛ն իմ գոհարեղեկներս,
եւ զանոնք, քո կառքիդ եւ ձերեղ փոխարեւ,
աւանդ քո՛ղ քո պարտքերեդ:

Դեռ ո՛րչափ մարդիկ չեն գտնուիր արդեօք,
որոնք երբեք դրամ չունին արդարութեան
պարտքերը վճարելու համար, և որոնք սա-
կայն դրամ ունին, և կամ զայն միշտ կը
գտնեն չքեղապէս կահաւորեալ տուներ ու-
նենալու, հազար ու մէկ աւելորդ ծախքեր
ընելու, որոնք պարզ ճաշակի, և թերեւս
երբեմն ալ մեղանշական բաներ են:

Անգլիացի ազնուական մը, որ իւր բան-
ուորներուն վարձքը վճարելու մասին շատ
օրինակելի չէր, ապարանք մը կը կառուցա-
նէր. Ասոր մէջ մատուռ մըն ալ շինել տուաւ,
և ուզեց որ ընդարձակ ըլլայ. Երբ մատրան
չինութիւնն աւարտեցաւ, հրամայեց իւր
բանուորներէն միոյն, որպէս զի ամպլոն ել-
նելով, բաներ մը արտասանէ, որով կարի-
նայ հասկնալ թէ, մատուռն արձագանգ կու-
տայ թէ ոչ. Բանուորն ամպլոն ելնելով,
բարձր ձայնով ըսաւ. «Տէր իմ, վեց ամիս է
որ մենք կ'աշխատինք, և տակաւին ձեր
դրամին երեսը չտեսանք. Երբ մեր աշխա-
տանաց վարձքը պիտի վճարէք»: Լաւ, շաւ,
ըսաւ այդ պարոնն, իջի՛ր քանակաւ ե. շատ
յսակ կերպով կը խօսիս, քայց ընտրած նիւթդ
ինծի հաճեցի չե: Անուանի մեծն Թիարեկ շատ
տարբեր կերպով կը մտածէր և կը գործէր.
Գերմանիա գտնուող բանակին հրամանատա-
րութիւնը ստանձնած ըլլալով, գինուորները
այն աստիճան թշուառ վիճակի մէջ գտաւ,
որ իւր սեղանին արծաթեղէն սպասները ծա-
խեց նոյններուն զգեստ և ձի հայթայթելու
համար, և իւր բարեկամներուն իրեն մատու-
ցած կարեւոր գումարները երբեք չուզեց ըն-
դունիլ, և ոչ ալ վաճառականներէն բան մը
ապառիկ գնել, վախնալով որ, կ'ըսէր ինք,
չըլլայ թէ պատերազմի մէջ սպաննուելու պա-
րտաւային, իրենց պահանջանաց մեծ մասը
չկորսնցնեն. Իւր տան շինութեան համար աշ-
խատող բոլոր բանուորներուն հրաման ըրած

էր, իրեն պատերազմի մեկնելէն առաջ, իրենց
հաշիւները ներկայացնել. գործնք ճշգուծեամբ
և կանոնաւորապէս կը վճարէր:

Տը Ռէձ կարդինալն ալ արդարութեան
այս նիւթին մէջ նուազ խղճամիտ չէր. Եր-
բեք մեծատուն մը այնչափ ծախքեր ըրած,
այնչափ գումար փոխ առած, և այնչափ ալ
կանոնաւոր կերպով հատուցած չէ: Վերջին
անգամ, որ Հռովմ կը մեկնէր, ուր ստիպո-
ղական գործեր իրեն ներկայութիւնը անհրա-
ժեշտ կ'ընէին, իւր պարտատէրերը հրաւիրե-
լով իրենց ըսաւ որ, չէր կրնար իրենց տալ,
եթէ ոչ գումար մը, և այն ալ, այն ինչ
ատենին. Եւ թէ ներկայ գտնուող Պ. Ա. Ա.
ասոր երաշխաւոր ըլլալ յանձն կ'առնուր.
Ասոր վրայ բոլոր իւր պարտատէրերը բողո-
քեցին, և ըսին թէ, ստակ ուզելու համար
եկած չէին, և թէ իրեն ծառայութեան հա-
մար տակաւին տրամադրելի դրամ ունէին.
Ի մէջ այլոց, Տիկին մը, անոր յիշուհ հա-
պար սկուտ (250,000 Ֆրանք) մատուց, զոր
կը խնդրէր ընդունիլ իւր ճանապարհորդու-
թեան ծախուց համար. Կարդինալն, այդ
մարդոց վեհանձնութենէն մեծապէս շարժեալ,
և անոնց իւր վրայ ունեցած վստահութենէն
յուզուելով, անոնց իւր երախտագիտութիւնը
յայտնեց. Ապա հոն ներկայ գտնուող վաճա-
ռականի մը դառնալով ըսաւ. «Այս խեղճ
գլխարկախաճառն ալ կայ, որուն շատ պարտք
ունիս. Կ'աւելնամ զինքն զոն ընել չկարեւորու
հաւար, ինչպէս որ կը փախալիս, եւ ինչպէս
որ ինքն ալ արժանի ե»: «Ե՛ս, Գերապայծառ
Տէ՛ր, պատասխանեց գլխարկախաճառն, իրաւ
ե որ աղիւս եմ, քայց ուրիշներէն նուազ զգա-
յուն փոք չունիս, եւ ոչ ալ նուազ յարուսն
ձեր պատուական անձին. ձոզմե քան մը չեմ
պահանջեր, եւ անա՛ւ երեք կարեւորոցն գլխարկ
ալ, զորս կը խնդրեմ որ ձեր փետեղաւթ Տէրու-
թիւնն առնէ հետը «սակի»: Կարդինալն մինչեւ
յարտասուես փոճկեցաւ. Ժամանակ մը յետոյ
մեռաւ. քայց իւր դիտաւորութիւններն այն-
պէս հաւատարմաբար կատարուեցան, որ իւր
պարտատէրերէն ոչ ոք բան մը տուեց:

(Շարունակելի)

ԿԻՅԵՍՄ Բ. ԿԱՅՍԵՐ

Ս. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՂՐԿԱՍ ԸՆԾԱՆ

Ս. Հայրը Պիոս Ժ. Յուլիս 12ին առանձին ունկնդրութեան ընդունեցաւ Ն. Վ. Տ. Օթոն ֆոն Միւլլէրը, Ս. Աթոռին մօտ Բրուսիոյ արտաքոյ կարգի Պատուիրակը և Լիազօր Պաշտօնեան, որ Ն. Սրբութեան ընծայեց, յանուն Ն. Վեհափառութեան Գերմանիոյ Կիյեօմ Բ. Կայսեր, նմանահանութիւն մը Կոստանդինուօսի ինչպէս (Labarum) Վսեմ. Պաշտօնէին հետեւ էր Սփէի Կոմսը, Վեհափառ Կայսեր, Համարազը, Տեղակալ, Հրամանատար թիկնապահ զրահակիր զօրաց, որ յատկապէս կայսերական ընծան տանելու համար Հռոմ զրկուած էր:

Կոստանդինուօսի ինչպէս ճիշդ նմանը անցեալ տարի նկարեց, Եւսեբիոսի նկարագրութեան համեմատ, Յովսէփ Վիլիքեր Գերապայծառը, և ներկայացուց Վեհափառ Կայսեր, որ մեծապէս գոհ եղաւ, և Պէօրոնի Բենեդիկտեան Միաբանութեան Մատիւ-Լաաք վանքին կրօնաւորներուն յանձնարարեց անոր օրինակը հանել ճիշդ բնականին նման, այսինքն մետաղով, թաւիչով և պատուական քարերով:

Ինչպէս զորքը կը կազմուի փայտեայ նիզակաբունէ մը, որ պատուական մետաղով մը ծածկուած է: Վերի ծայրը կը գտնուի առաջատար մը մը ուսկից կը կախուի ծոպաւոր, համակ ոսկեծամուկ, ականակու թաւիչայ երիզ մը:

Թաւիչին վերեւը կը գտնուի Կոստանդինուօսի պսակապատ մենագիրը. այս մենագիրն ալ պատուական քարերով զարդարուած ընտիր մետաղէ է. թաւիչին ստորեւը ծոպին վերջացած տեղը, նիզակաբունին մէջ, տակէ տակ հաստատուած են չորս սքանչելակերտ մետաղներ, որ կը ներկայացնեն Կոստանդինուօս և անոր երեք որդիները, Կոստանդին կրտսեր, Կոստանդինոս Բ. և Կոստանդին Երկրորդը:

Ամբողջ ինչպէս զորքը երեք մէկը է այս չափը կամայական չէ, այլ իրականին համեմատ է, քանի որ յայտնի է թէ զորակին ծոպերը հազիւ դպչելու էին բարձրահասակ

ինչպէս զորակին սաղաւարտին վերի ծայրին: Բենեդիկտեան կրօնաւորներուն զօրքը ստուգիւ յաջողեցաւ ամէն տեսակէտով:

Վսեմ. պաշտօնեան մատոյց կայս. ընծան մի քանի խօսքերով և ըսաւ. նաեւ թէ Ն. Վեհափառութիւնը, իր օգոստափառ Տէրը, որ ամենամեծ շահագրգռութեամբ հետեւած էր Կոստանդինեան յորդեանին հանդէսներուն, իրեն երջանկութիւն կը համարի Ն. Սրբութեան զրկել, նոյն հանդէսներուն այս յիշատակը, որպէս զի պահուի՝ այն նոր եկեղեցիին մէջ զոր Ն. Սրբութիւնը ուղեց կառուցանել տալ Ֆլամինա Ճամբուն վրայ, և որ նուիրուած է Սուրբ Ինչպէս, ի յիշատակ անոր՝ հեթանոսութեան վրայ տարած յաղթանակին:

Ն. Սրբութիւնը շատ գոհ եղաւ Վեհափառ Կայսեր փափկանկատ պաշտօնաբէն, զոր կը նկատէր իբրեւ նոր հաւաստիք մը անոր ազնիւ զգացումներուն և կը խնդրէր Վսեմ. Պաշտօնէին, ինչպէս նաեւ ընծայաբեր Սփէի Կոմսէն, որուն եւս մի քանի շնորհակալութեան խօսքեր ուղղեց, որ յայտնեն Ն. Վեհափառութեան իր մեծ գոհունակութեան և շնորհակալութեան զգացումները՝ զրկուած թանկաւրին ընծային համար:

Քահանայապետական ունկնդրութենէն յետոյ Բրուսիոյ վսեմաշուք Պաշտօնեան Սփէի Կոմսին ընկերակցութեամբ այցելութիւն տուաւ Ն. Սրբութեան պետական Քարտուղար, Մէրի Տէլ Վալ Կարդինալին: Վսեմ. Կարդինալը որ արդէն արդի ունեցեր էր Կոստանդինեան ինչպէս զորքին ընտիր յօրինուածութեան վրայ հիմնադրու, իր այցելութեան հետ խօսեցաւ անոնց Օգոստափառ ինքնակալին ազնիւ և փափուկ մտածութեան մասին, և ծանոյց Սփէի Կոմսին որ Ս. Հայրը հաճած է անոր տալ Սուրբ-Գրիգոր-Մեծի Կարգին Հրամանատարի, Զինուորական Աստիճանին պատուանշանը, և զայն անոր յանձնեց:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿՐՕՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՁԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ .— Յայտնի է թէ այս միջոցին Չինաստան մեծ յեղափոխութեան մը մէջ կը գտնուի , և հոն յատկապէս ուժգնօրէն կը յուզուի կրօնական հարցը : Տեսնուեցան արդէն այն մեծարանքները զորս նոր կառավարութիւնը թոյց տուաւ կաթողիկէներուն նկատմամբ և այն գեղեցիկ արդիւնքները որոնք կաթողիկէ կաղմակերպութեան հաստատուելովը յառաջ եկան :

Էզդիթ թերթը այս մասին հետեւեալ շատ չահեկան տեղեկութիւնը կ'ընդունի Բէքինէն .

«Կազմէ՞ք Տը Բեքին կը հրատարակէ Չինաստանի նախարարաց խորհուրդին նախագահ Յունկ-Յի-Լինկի մէկ տեսակցութիւնը՝ Չինաստանի մէջ կրօնքներու հարցին մասին : Նախարարը յատկապէս յայտարարած է .

«Կրօնքը ազգի մը հոգիէն է : Մարդը կը մեռնի երբ իր հոգին մարմինը թողու . նոյնպէս ազգ մը կը վսանգուի երբ այլեւս չի պահեր կրօնի պատփերը եւ հրաւանները :»

Յունկ-Յի-Լինկ յանձն չ'առնուր Կոնփիւկիոսութիւնը իբրեւ պետական կրօնք ընդունիլ :

Կը յայտարարէ թէ Կոնփիւկիոսի վարդապետութեան բարոյական բարձր արժէքը հաստատուելու համար հարկ չէ քաղաքականօրէն ոյժ տալ անոր : Կը յաւելու թէ Բրիտանիոյ կրօնքը շատ արժանի է աշխարհի ժողովուրդներուն վրայ թափաւորելու : Ասոր համար ինք չ'ուզեր որ Չինաստանի մէջ պետական կրօնք գտնուի :

Իր կարծիքով , եթէ Կոնփիւկիոսութիւնը պետական կրօնք հրատարակուի , Չինաստանի մէջ կրօնական մեծ պայքարներ տեղի պիտի ունենան :

«Վերջապէս , կ'եզրակացնէ Չինաստանի նախարարապետը , ազգի մը ապագան անոր կրօնական կազմակերպութեան կախում ունի : Կրօնասէր ժողովուրդը՝ միշտ զօրաւոր ժողովուրդ մըն է : Եթէ կ'ուզենք որ Չինաստան մեծ ազգ մնայ , պէ՞տք ունինք շատ քահանաներու եւ առաքելներու :»

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ՓՈՓՐ-ՔՈՅՐԵՐԸ ՁԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ .—Կաթողիկէ բանակին մէջ Փոքր-Քոյրերը յառաջապահ գունդեր չեն կազմեր , այլ յաւէտ անոր ուղեկիցներն են , որոնց պաշտօնն է յետամնացները , հաշմանները հաւաքել , դարմանել : Անոնք ախորժ Եւրոպայի և Ամերիկայի գլխաւոր քաղաքներուն մէջ տուներ ունին , բայց զարմանալի չէ այս . որովհետեւ այս երկիրները քրիստոնեայ երկիրներ են , ընկերսիրութիւնը ծաղկած է անոնց մէջ :

Բայց բոլորովին տարբեր է Մայրագոյն-Արեւելքը , ուր բուդդայականութիւնը և կոնփիւկիոսութիւնը , երկար դարերէ յետոյ թէև կրցեր են ինչ ինչ մարդասիրական ձեռնարկներու ծնունդ տալ , բայց իրօք լուրջ ու կայուն բան մը չեն ըրած :

Աղքատախնամ Փոքր-Քոյրերուն գերմարդկային արիւթիւն մը պէտք էր որ կարենային այսպիսի երկրի մը մէջ երթալ հաստատուլ այնպիսի գործ մը , որ ընկերսիրութեան ազատակամ սուրբերովը միայն կը հիմնուի և կը շարունակուի : Փոքր-Քոյրերը Արեւելք գացած են այլեւայլ ժամանակներ :

1892ին գաղթականութիւն մը Կոստանդնուպոլիս կ'երթար , հրաւիրուած եօթանասնամեայ բարերարի մը կողմէ , որ իր տունը կը նուիրէր և կը խնդրէր ընդունուիլ և խնամուիլ իբրեւ ծեր :

Անկէ մի քանի տարի առաջ , Հնդկաստան անցան , և 1873ին հաստատուեցան Քոլոմպոյի , Կալկաթթայի և Պէնկալորի մէջ :

Շանկայի հիմնարկութիւնը առաջինն է և ցարդ միակը Մայրագոյն - Արեւելքի մէջ : Յանդպնութիւն . Որովհետեւ Չինաստանի պէս տեղ մը , որուն բոլոր քաղաքներուն մէջ հարիւրաւոր անոք , ամէն բանէ զուրկ ութմամեաներ կան , կարելի է գտնել ինչ որ պէտք է անոնց բնակութեան , զգեստին , ուտեստին և հանգստեան համար , առանց զըրպանին մէջ ստակ մը ունենալու , առանց հաստատուն եկամուտներու : Ինչ որ մեզի անկարելի կ'երեւի , կատարեցին Փոքր-Քոյրերը Շանկայի մէջ :

1904 Փետր. 13ին, իրենցմէ եօթը հոգի Շանկայ հասան։ Ինչպէս յաջողեցան հոն, ինչպէս ամէն տեղ, Սկիւբըր գէշ աղէկ տեղաւորուեցան 72 պառաւներով չինական վազեմի հիւղերու մէջ։

1906 Մայիս 30ին, յատկապէս կառուցուած շէնքերու մէջ աւելի հանգիստ էին 150 պառաւներու և 100 ծերերու հետ։ Յաջորդ տարին 300 մահի՛ն ունէին կէսը այրեալու, կէսը կիներու համար։

Ասոնք ո՛ր երկիրներէ կ'ելլեն, Ամէն երկիրներէ, Ուրուհետեւ իրենց ամէն Հաստատութիւնները գոնէ մի քանի նորընծայ տուած են, Ամենէն աւելի Փոքր-Քոյր տուող երկիրը Ֆրանսան է, յետոյ՝ Պիւճիկա, Սպանիա, Անգլիա, Իտալիա և Միացեալ-Նահանգները։ Չինաստան ալ իրեն ինկած բաժինը հալթայթեց, որովհետեւ նոյն համայնքին մէջ 18 Եւրոպուհիներէ զատ կան նաև 11 Չինուհիներ։ Օրինակով ցոյց տրուած ընկերսիրութիւնը ամենէն աւելի փոխանցիկ է։ Սկզբունքով՝ ամբողջ Կարգը մէկ ընծայարան միայն ունենալու է։ Բայց հարկ եղած է հաստատել նաև Անվէրի, Մարինոյի, Մատրիտի, Սիւնէյի և... Շանկայի մէջ։ Այո՛, Շանկայի մէջ Փոքր-Քոյրերը ընծայարան մը ունին։ Առատաձեռն անձ մը անոր ամբողջ ծախքերը ըրած է։

Անկեղանոցը, իր հիմնարկութենէն ի վեր 1147 տնանկներ ընդունել է, որոնց 585ը կին են, իսկ 562ը այր։ Անթիւ են անոնք որ դուռը կը սպասեն և ունին միանգամայն պահանջուած պայմանները, ախինքն վաթմանամեայ հասակ և բացարձակ աղքատութիւն։

Նկատելի է որ Չինաստանի մէջ այս առաջին Հաստատութիւնը միայն բնիկներուն առջեւ բաց է։ Այլուր գոնեւ բաց են անխտիր ամէն տնանկ ծերի համար առանց ցեղի կամ կրօնքի տարբերութեան։ Այս կերպով, Նոր-Օսթէանի մէկ ծերանոցին մէջ գտնուեցան 18 աղքի ծերեր որոնք դրամ չահելու համար Ամերիկա գացած էին։ Թէեւ այս ծերերը, ամէնքն ալ, Չինաստանցի են, բայց նպաստները, որոնցմով կ'ապրին, համաշխարհային են։

Եւ այս է ճշմարիտ քաղաքակրթութեան գեղեցիկ կողմը, զոր օտարները միահամուռ այս հեթանոս և կռապաշտ աղգին կը սորվեցնեն։

Շանկայի, ինչպէս ամէն երկրի մէջ, կը տեսնէք Փոքր-Քոյրեր, որ երկու երկու համեստօրէն կը քալեն և իրենց ծերերուն համար ուղորմութիւն կ'ուզեն։ Իրենց խնդիրքը կ'ընեն առանց թախանձանքի, բայց նաև առանց վեհերոտութեան։ Հաւաքուհիները ամէն օր, կիրակիէն զատ, ամէն տեսակ բան կ'առնուն։ պտուղ, բանջար, ձուկ, ձու, միս, հաւ, վառեակ կ'իյնան անոնց կողմնորուն մէջ։ Կը մանեն հիւպատոսարանները, մեծ մթերանոցները, հարուստ պանդոկները, նաւերը, ճաշարանները, և թոշակաւոր դրարոցները, և այն տեղերէն կը աանին ուտեստ, զգեստ, դրամ։

Լոնտոնցի արուեստագէտ մը նկարած է Փոքր-Քոյրերը երբ հանգանակութենէ կը դառնան և իրենց Մեծաւորուհի մօր և պատըսպարեալներուն առջեւ կը դնեն ժողված բաներնին։ Այս նկարէն սրտառուչ բան չկայ, որ կը պատկերացնէ իրօք ինչ որ կը պատահի գրեթէ ամէն տեղ, նոյն իսկ Չինաստանի մէջ։ մուճակներ, բեղոյրներ, լաթեր, ճերմկեղէններ, պատմուճաններ, ամէն տեսակ հագուստներ։ հացի պարկ, բրինձի պարկ, բանջարեղէնի կողով, շաքար, զինի, գարեջուր։ Անցեալ տարի ձի մը կառքը կը քաջէր։ Չին ըմբոստ և անհանդարտ ըլլալուն՝ յարմար չէր բազմամարդ փողոցներէն անցնելու։ Քաղաքապետութիւնը այս բանս տեսնելով հանդարտ ջորի մը տուաւ անոնց որ շատ աւելի լաւ կերպով կը կատարէ նոյն պաշտօնը։ Կան նաև կովեր, չորս ալուոր աւստրալիական կովեր, որոնց համար արդի առողջապահութեան ամէն պահանջներուն համեմատ ախոռ մը կը շինուէր։ Ախոռը չլինցած՝ չորս աղուոր կովերը ժանտախտէ մեռան։ Հիմայ ախոռը պատրաստ է բայց դատարկ։ Աւստրալիայէն նոր երկնջ մը կը սպասուի։ Բայց ո՛վ պիտի տայ դրամը։

— Եթէ մրցահանդէսի մէջ յաղթեմ, ըսաւ նպաստահաւաք Քոյրերուն ոչ-կաթո-

ղիկէ արտախաղորդ մը, երկնջի մը գինը ձե-
ղի պիտի տամ: Պարոնը յաղթեց և գրամը
տուաւ:

Հաւաքուհիները ճոխ ապարանքները կը
մտնեն, բանուորներու դռները կը զարնեն:
Ձեռնուռնայն ետ չեն զրկուիր երբեք: Ան-
գամ մը միայն պարոն մը դուռը դէմերին
փակեց ըսելով թէ «Ես ձեր աղանդէն չեմ»:
Քոյրերը այսուհանդերձ դարձեալ գային նոյն
պարոնին տունը, որ արձանագրել տուաւ
կլորիկ գումար մը, զոր ամէն ամիս կ'եր-
թան կ'առնուն Քոյրերը:

Ահա ա'յսօրինակ անձնանուիրութիւննե-
րու շնորհիւ քրիստոնէական ընկերասիրու-
թիւնը հրաշքներ կը գործէ Շանկայի մէջ,
որ նիւթակրօն և հեթանոս Մայրագոյն-
Արեւելքի ամէնէն անձնասէր և հաճոյապաշտ
քաղաքն է:

ՄԱՐՏՍԱՆԱԻ ՄԸ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՈՐ
ՄԵՏԱՂՆԵՐԸ ԿԸ ԳՈՐԾԱԾՈՒԻՆ:— Մետաղ-
ներու Հաստատութեան նոր գահերէցը, Հան-
րի Յ. Օրամ, ուսումնասիրած է թէ արդի
մարտանաւերուն շինութեան մէջ ի՞նչ հա-
մեմատութեամբ կը մտնեն երկաթը և միւս
մետաղները:

Պողպատը կը գործածեն ուր որ կարելի է,
այնպէս որ այժմ այլ ևս արդի նաւերուն
վրայ չեն գտնուիր այն ճոխ գանձերը պղին-
ձի, արոյրի, անագապղինձի և այլն, որոնք
այնքան կ'աւելցնէին հին նաւերուն գինը:
Սակայն պողպատի մեքենական մեծ ընդդի-
մութեան յատկութիւնները ամէն տեղւոյ մէջ
չեն յարմարիր, և շատ պարագաներ կան որ
պղինձի, նիքելի կամ ուրիշ մետաղներու
կամ յարազօղներու ներկայացուցած հանգա-
մանքները աւելի կը փնտռուին:

Համեմատաբար, 100 տակառաչափ եր-
կաթի և պողպատի դէմ, արդի մարտանա-
ւերուն շինութեան ատեն կը պորձածուն՝
զրահանաւերու մէջ 6 տակառաչափ պղինձ
կամ պղինձի յարազօղներ, յածանաւերու մէջ՝
8 տակառաչափ: Տարբերութիւնը յառաջ կու
գայ անկէ որ յածանաւը զրահանաւէն նուազ
գորաւոր պողպատէ զրահ մը և համեմատա-

բար անկէ աւելի գորաւոր մեքենաներ ունի:

Արդի մարտանաւի մը յառաջամուկ մե-
քենան կը պարունակէ համեմատաբար 100
հազարակրամ երկաթի և պողպատի գինաց
17 հազարակրամ ուրիշ մետաղներ, մինչդեռ
20 տարի առաջ համեմատութիւնը շատ ա-
ւելի էր (34 հազարակրամ ուրիշ մետաղ):

Նաեւ կոնքին շինութեան մէջ, ընդհա-
կառակն, միւս մետաղներուն համեմատու-
թիւնը թեթեւ կերպով աւելցած է, հիմայ
44 առ 1000 է, մինչդեռ 20 տարի առաջ
միմիայն 42 առ 1000 էր:

Թէեւ այժմ շատ մը կազմածներու և սար-
ուածներու մէջ երկաթը և պողպատը ուրիշ
մետաղներու տեղ կը բռնեն, բայց այս վեր-
ջիններն ալ մեծ տեղ կը գրաւեն նոր կազ-
մածներու մէջ, որ են օրինակի համար թըն-
դանօթակիր աշտարակներ, աշտարակներու
մեքենաներ, հրդէհի դէմ կազմածներ, ելեք-
տրահազորդ խողովակներ, հեռաձայններ, ևն.:

ԷԹՏԷՆ ԲԷՐՆԻՋԷ ՏՕՂՐՈՒ

(Տեղամի)

Մատամ սօքթորս ձէվապէն,

— Էվվէթ, սօքթօր, տէր, հաթթա ճու-
մաա կիւնլէրի պիլէ էթ եէր:

— Ժա'նն, սէն սուս օլ:

— Սահիհ մի, տէյէ սօրար սօքթօր: Շու-
հալտէ շիմտի հէր շէյ անլաչըլառ... պաղը-
նըդ նէ' օլմուշ. ուզվիյաթընըդ սարֆիյա-
թընտան գիյատէ նաֆաա ալմըշ, վէ պէօպ-
րէյինիզ գուվվէթլի օլտուղը միւստէթճէ,
քէնտլնէ վէրտիյինիզ պու ֆաղլա զահմէթէ
գաթլանապիլմիշ... սօն սօնը իշթէ պու կիւն
արթըդ իյֆաի վազիֆէտէն աճիզ գալմըշ...

— Ալթմըշ եաշընտա' մը...

— Պու եաշա գատար տալանապիլտիյի
իշուն պէօպրէյինիզ շայանը թէպրիք տիր,
չունքի տահա էվվէլ եօրուլտպիլիրտի:

— Պիրազ սօնրա տա եօրուլտպիլիրտի:

— Էյէր պիրազ պասիրէթլէ գուլլանմըշ
օլտալտընըդ, հիշ տալա եօրուլտալաճադտը:

— Նէ' եալմալլըտըմ:

— Պազը կիւնւէր էթ եւմէմէլի խորհիդ ,
հախօտ հիշ օլմապսա ազշամ թաամընտա էթ
պուլընտըրմամալըյտընը . Պազը քէրրէ , մէ-
սէլա պահարտա սէպզէյէ գուվվէթ վէրմէլի
խորհիդ . . .

Պուսըն իւզէրինէ մատամ տօթթօրա տէօ-
նէրէք .

— Տօթթօր , իշթէ տէտիյինիզի պէն հաբը-
յօրոււմ , ճուսաա կիւնւէրի վէ մեծ պահքտա
էթ եւմէմ , տէր :

— Մէզհէպ նօղթաի նազարընտան պիւս-
պիւթիւն վազ կէշիլսէ պիլէ , բերհիդ չօդ
էյի պիր շէյ տիր : Պէօյիւք տօթթօրլարըն ,
խուսուսիյլէ բրօթէսէօր Հիւշարըն քիթապ-
լարընը օգուրսանըզ , կէօրիւսիւնիւզ քի ծն-
լար իշին բերհիդ սանաաթճա , ֆէննէն իս-
թիհսալ իտիւմիշպիր թէճրիպէ , պիր գա-
նաաթ իտի :

Մատամ գօճասընա թէվճիհի քէլամ ի-
տէրէք .

— Կէօրիւյօրմըսըն , ազիդիմ , զաթէն
պուսը պէն սանա տէմէմիշպի՞ իտիմ տէր :

— Նէ՛ պիլէյիմ , պէն բէյլամպէր տէյիլ-
տիմ հա , պէն գուվվէթ պուլմազ իսթէրտիմ
Տօթթօր պուսը ճէրհ իտէրէք տէր :

— Ինսանա գուվվէթ վէրէն եւտիյի շէյ
տէյիլ տիր , թէմիլ իթտիյի տիր . . . պու տա
բէք գօլայլըզլա իխրաճ օլունուր . . . Հապու-
քի էթ հասըլ իթտիյի ֆազլա թագիլ սէ-
պէպիյլէ պաշպա շէյլէրտէն տահա զիյատէ
զարարլը օլուր : Պազընըզ , արքանտիսիթ ,
տամիա , շէքէր իլլէթի , գոււմ մարազը հազ-
զընտա սթաթիսթիլէր հաբմըշտըրլար . . .
Պու խասթալըզլար էն չօդ նէ՛րէլէրտէ քէշֆ
օլունմուշլար պիլիյօրմըսընըզ : Զօզ էթ եւ-
յէն զէնկին մուհիթլէրաէ , Նէ՛րէլէրտէ պու-
լընմատըզընը տա պիլմէք իսթէրմիսիդ .
ֆուգարատա , էսնաֆ թազըմընտա . . . չիֆթ-
ճիլէրաէ , թրաքիսթլէրաէ , Շարթէօլէրտէ ,
էրքէք վէ եա դատըն մանասթըրլարընտա .
չունքի պուսլար ալէսսէվիյէ ուզուն բէրհիդ-
լէր թութարլար : Էլվէրի քի միւնհասըրէն
սէպզէ իլէ կէշինմէսիւլէր :

Էֆէնսի միւթէհայիթ պիր սուրէթտէ
տօթթօրա պազըյօրտը :

— Քեաշքի պուսլարը պիլմիշ օլսայտըմ :

— Ազ չօդ պիլմէքլիյին լազըմ կէլիրտի ,
նասթա ճէվապտան աճիզ գալարադ ,
մազլուպ օլտուղընը հիսս իտէր վէ պաշընը
էյէր :

Տօթթօր պիր քեաղըտ գալէմ ալարադ ,

— Իշթէ սիզէ պիր մըգտար թէօպրօմին
հազըյօրոււմ , տէր :

Նէ՛ հաբմալը :

— Պիւթիւն ուզվիյէթիհի պիր թէմիդ-
լէմէք իշին . . . Շիմտիլիք հէր տիւրլիւ թէհ-
լիքէ զայիլ օլմուշ տըր . . . Պու սիզէ պիր
տէրս օլտուն , արթըզ պիր րեթիւմ թութուն ,
պու կիւնտէն հարընա սուտան պաշպա գա-
թիէն պիր շէյ ալմալըն , անլայօրմըսընըզ ,
գաքիյիւն տէյօրըմ : Սօնրա սիւտէ միւսաաաւէ
իտէրիմ : Շավաշ եավաշ սէպզէ վէ եուսուր-
թանըն տա սըրասը կէլիր . . . լաքին էթէ ի-
զին վիրէճէյիմի հիշ մէմուլ իթմէյօրըմ :

— Ամա՛ն տօթթօր :

— Ազիդիմ , հա տիյնէմէլի , հա եօզսա
թէլիքէյի իլթիզամ իթմէլի : Պուստան պէօյ-
լէ սիզին նաֆազանըզ սիւտ վէ սէպզէ օլա-
ճադ . . . բէք ազ քէրրէ , միւսթէսնա օլա-
րադ . . . եօզսա . . .

— Պուսը հաբարսամ էյի օլաճազըմա պէ-
նի թէմին իտէ՛րմիսիդ :

— Էվվէթ , թէմին իտէրիմ :

— Շու հալտէ , մատամ քի պէօյլէ իճապ
իտիյօր , նամուսըմ իւզէրինէ սէօզ վէրիրիմ
քի իթաաթ իտէճէյիմ :

Տօթթօր խասթանըն էլինի սամիմանէ սըգ-
տըգտան սօնրա շէքլիլի կիտէր :

Մատամ տօթթօրը գաբուլա գատար թէշ-
հի իթաիքաէն սօնրա գօճասընըն օտասընա
կէլիր :

— Կէօրիւյօրմըսըն , իշթէ թութուտուն .
հէմ տէ պու խասթէլիյի կիւնահ իշլէտիյին
շէյտէն պուտուն . . . պէնի տիլլէմիշ օլսա
խորին . . .

— Սահիհէն տէ էօյլէ տիր . . . ֆազաթ
սէն պէնի պէօյլէ իդնա իտէմէյօրտըն , թէ-
սատիւք էսէրի օլարապ սէն հազզըլ չըգտըն ,
նէ իսէ . . .

— Թէսատիւֆ էսէրի օլարաֆ մը, թէսատիւֆ մի, տէտի մասամ էլլէրինի գաւուշտուրարագ: Բիլիսա թէսատիւֆ էսէրի օլարաֆ մը բէրհիդ թէնպիհ իտէր գանն իտէրսին: Պին քէրիէ սանա թէքար իթմիշիմ քի Բիլիսանըն թէնպիհիլէրինի իլհամ իտէն Ալլահ տըր, պինաէն ալէյհ տէ, հաթթա վիւճուտ իչին տաիի խայըրը տըրլար:

— Էլ վէրիւր արթըգ չու քարոզլարըն, պէնի օսանտըրըյօրըն:

— Զանն իտիյօրմըսըն քի պէն տէ սէնի պու հալտէ կէօրմէքտէն օսանմայօրմ:

— Պէն էյի օլուրու:

— Ինչալլահ, լաքին նէ՛ շարթ իլէ... Պաշլամագ լազըմ կէլէն եէրտէ պիթիրմէքլէ, իթաաթ իթմէքլէ... Ազիզիմ, Ալլահ տան, Բիլիսատան ուզագլաշմագ օլմագ... — Իշթէ պէն տէ եագլաշըյօրուեա՛... — Մատամ պու ճէվապ իւզէրինէ միւլայիմ բէրաէ իլէ տէր:

— Պարզընտա օլտու՛ն մը, տօքթօրըն ոէօզիւնէ նէ՛ գտտար գօլայըզլա թէսլիմ օլտուն... պու սէնին գաթիէն աղըրընա կիթմէտի, նէ՛ ութանտըն, նէ՛ տէ մահնուպ օլտուն... եա Բիլիսանըն թէնպիհաթընա իթաաթ իթմէք նի՛չին պու գատար աղըրընա կիտէրտի... Հալպու քի Բիլիսայա իթաաթ իթմէքտէ պու գատար պիլէ մահնուպիյէթ հօզ տըր:

— Պարզընտա օլտու՛ն մը, տօքթօրըն ոէօզիւնէ նէ՛ գտտար գօլայըզլա թէսլիմ օլտուն... պու սէնին գաթիէն աղըրընա կիթմէտի, նէ՛ ութանտըն, նէ՛ տէ մահնուպ օլտուն... եա Բիլիսանըն թէնպիհաթընա իթաաթ իթմէք նի՛չին պու գատար աղըրընա կիտէրտի... Հալպու քի Բիլիսայա իթաաթ իթմէքտէ պու գատար պիլէ մահնուպիյէթ հօզ տըր:

Էֆէնտի կէօղլէրինի իրիճէ աշմը վէ հիչ պիր ճէվապ վէրմէքսիզին գարըսընա պաղըյօրտը, չու՛նքի արթըգ ճէվապտան աճիզ գալմըտը:

— Տէ, էօլլէ իսէ, սէվկիլիմ, տէտի մատամ իօշ պիր թէպէսիւմլէ, արթըգ շիմոէն սօնրա, կէչմիշ թութմատըղըն միժ պահլար եէրինէ բէրհիդ թութարսըն... Պիր մուգապէլէ եա միւպատէլէ իսթէր: Պէնիմ իլէ պէրապէր սէն տէ սէվին քի, Ալլահ սէնին պու պօրճընը պու տիւնեատէ թէտիյէ իթաիրմէք իսթէտի, հօգաա օ պիր տիւնեատէ ֆարզը պիր բէրհիդ թութմայա մէճպուր օլաճագտըն... —

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Այս միջին Լուրտէն Հասմ գացող քաղաքիւ ուխտաւորներ, Ս. Քահանայապետին ունկնդրութեան արժանի եղան: Ն. Սրբութիւնը հայրական սիրով ընդունեցաւ զանոնք և յոնձնարարեց յատկապէս որ աղօթեն աշխարհի խաղաղութեան համար:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. — Գեղարպատիւ կղեմէս վ. Աստուրեան, Մեծաւոր Սուրբ Աստուածածին Աթոռանիստ եկեղեցւոյ, որ Լուրտ ուխտի գացած էր, ամսոյս 22ին Պոլիս վերագարձաւ:

ՆԻՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Օգոստոս 12ին ելաւ հետեւեալ կայս. Իրատէն անմարդ զինուորացւորներու զօրակոչին գաղտնի մասին:

«Մինչ մեր սիրեցեալ հայրենիքին խաղաղօրէն յառաջդիմելուն կ'աշխատինք, Եւրոպայի մէջ մեծ պատերազմ մը սկսաւ:

«Աստուծոյ օգնութեամբ մեր նուիրական իրաւունքները պաշտպանելու համար բոլոր զաւակներս ի զէն կոչեցի: Տակաւին զօրահանութեան շաքաթը չաւարտած, այնչափ շատ երիտասարդներ զէնքի տակ եկան որ բանակին առաջին պէտքը գոհացուեցաւ: Ազգիս ցոյց տուած այս եռանդէն ու հայրենասիրութենէն խիստ զգածուեցայ:

«Ի հարկին դարձեալ ի զէն կոչելու պայմանաւ, իրատէ ըրի որ առ այժմ աւելորդ մնացած եւ մարզանք չտեսած տարեցները առժամապէս արձակուին: Իրենց երկիրը դարձողները թող զէնքի տակ մնացող իրենց ընկերներուն արտերուն գործերը տեսնեն:

«Կառավարութիւնս խաղաղութեան մէջ ապրիլ կ'ուզէ: Վստահ եմ թէ Աստուծոյ ողորմութեան, մեր Մարգարէին օժանդակութեան եւ ազգին եռանդին ու հայրենասիրութեան շնորհիւ պիտի կրնանք մեր երկիրն ու իրաւունքները պաշտպանել ամէն պարագայի մէջ:

«Կ'ողջունեմ բոլոր զաւակներս: Զինուոր զաւակներէս բացարձակապէս կը պահանջեմ որ իրենց մեծերուն խօսքը իբր իմ խօսքս նկատեն եւ հոգիով ու բարմով ամէն գործի մէջ անդրդուելի հնազանդութիւն մը ցոյց տան եւ ի հարկին մահուան դիմագրաւեն մէկ հոգի եւ մէկ մարմին եղած:

«Ապահով եմ որ բանակս, մեր նախահարց պէս, ճշմարտութեան ճամբուն մէջ տոկունութեամբ պիտի աշխատի եւ իր պարտականութիւնը լիովին պիտի կատարէ: Բարձրեալն Աստուած մեր զօրավիգն ըլլայ:»

— Բանակին վարչութիւնը մամուլին միջոցով հետեւեալ յայտարարութիւնը կ'ընէ.

Զօրաբանակներուն քաարօնները լրացնելէն ետք:

մնացած անվարժ գինուորացիները, էն տարեց (իսթիյար)ներէն սկսելով պիտի արձակուին: Հետեւաբար բովանդակ օսմ. երկիրներու մէջ, միեւնոյն եղանակով տեղի պիտի ունենայ զօրարձակումի այդ գործողութիւնը: Եւ, զօրարանակներէն ոմանք աւելի շատ, ոմանք ալ աւելի քիչ կրնան արձակել: Բայց ցրուած այդ գինուորները իսկապէս արձակուած չեն նկատուիր: Ասանք հիմակուհիմա տուներին երթալու համար հրաման առած պիտի նկատուին և ամէն գինուոր գինուորապետութեան մասնաճիւղին գիմկով՝ զօրակոյն պատասխանած և իրեն արտօնութիւն տրուած ըլլալը յայտնող մէյմէկ վէսիֆա պիտի առնէ: Տասը օրուան մէջ վէսիֆա չառնողները՝ օրինական հրաւերին չպատասխանող պիտի նկատուին և ըստ այնմ պիտի պատժուին:

* * * Մամուլոյ վերադառնալով թեան կողմէ հաղորդուած է հետեւեալ զեկոյցը.

Որոշուած էր Արմաթթոնկի նաւագործարանին մէջ շինուած Սուլթան Օսման արեւմտեան յանձնել Սեպտ. 30ին, բայց քաղաքական կացութեան մէջ առաջ եկած շփոթութիւններուն և կասկածելի նշաններուն պատճառաւ փորձերուն մէկ մասը զանց առնուած էր և մինչեւ իսկ երկու թնդանօթները պակաս ըլլալու պայմանաւ նաւագործարանը հաւանած էր արեւմտեան Օգոստոս 1ին յանձնել, շնորհիւ կառավարութեան ջանքերուն: Նոյն իսկ որոշուած էր վերջին մասնավարը՝ 700,000 ոսկի՝ նոյն օրը հատուցանել և միեւնոյն փամանակ օսմ. դրօշ պարզել յիշեալ մարտանուն վրայ: Արդ, օսմանեան դրօշը պարզելու համար որոշուած միջոցէն կէս փամ առաջ, անգլ. կառավարութիւնը զեկուցագիր մը ուղղեց Արմաթթոնկի նաւագործարանին թէ անգլ. նաւագործարաններուն մէջ շինուելու վրայ եղած մարտանակները, ո՞ր տէրութեան ալ պատկանին, պէտք չէ ա՛նէ և պատրուակու հեռացուին թայն քաղաքէն կամ անգլ. ծովեզերքներէն և թէ այս նպատակով արգելիչ միջոցներ ձեռք առնուած են:

«Ըստ այսմ, Սուլթան Օսմանը վար դրուած (անպարկ) և անգլ. կառավարութեան կողմէ գրաւուած է: Այս գործողութիւնը միջազգային իրաւանց բոլորովին հակառակ ըլլալով, օսմ. կառավարութիւնը անմիջապէս և ազդուապէս բողոքեց անգլ. դաշինքին մօտ, Լանսնի օսմ. դեսպանատան միջոցաւ: Անգլ. կառավարութիւնը պատասխանեց թէ իր երկրին շահերը կը պարտաւորեն զինքը այս վարչական տնօրինութիւնը ընելու և թէ այսուհետեւ Անգլիա մարտանակին փոխարժեքը պիտի հատուցանէ օսմ. կառավարութեան: Կարելի եղած չէ ասկէ ուրիշ պատասխան մը ստանալ: Օսմ. կառավարութիւնը անգամ մը ևս անգլ. կառավարութեան հաղորդեց թէ այս գործողութիւնը խորին ցաւ պատճառած է իրեն: Ծովային նախարարութեան կողմէ ալ քորթսքո օտարեկցաւ Արմաթթոնկի նաւագործարանին դէմ:»

— Անգլ. կառավարութիւնը վար դրուած նաեւ օսմ. պետութեան Ռեաթի արեւմտեան և երկու թորփիլա հալածները:

* * * Օսմ. կառավարութիւնը կեօպէն արեւմտեան և Պրէսլա յաճանաւը 80 միլիոն մարքի ծախս առաւ գերման կառավարութեան: Կեօպէն կոշտեցաւ Եսվուզ Սուլթան Սէլիմ, իսկ Պրէսլա՝ Միթիլի: Տրէթնօթն ու յաճանաւը օգոստոս 10ին նեղուցէն ներս մտան:

— Թուրք թերթերը մեծ ուրախութեամբ կ'ոգնեն: այս լուրը: Թանին կը գրէ. «Եթէ Սուլթան Օսման արեւմտեան մասին անգլ. կառավարութեան յափշտակիչ ընթացքը միակ ըլլար, թէ՛ անկատար և թէ անիմաստ բան մը եղած պիտի ըլլար: Նրկորդ որոշումը, որ առաջինին հետեւեցաւ, ամբողջացող զայն և Անգլիոյ նպատակը հասկցուց: Երեք գեղեցիկ մարտանակներ, որ քիչ օրէն միանալով հզօր նաւաւորութիւն մը պիտի կազմէին, շխուստփեցան այդ տէրութեան յափշտակիչ ձեռքէն: Ռեաթիէն, որ քանի մը ամիս ետք կ'առելու վիճակի մէջ պիտի ըլլար, և երկու մեծ ու գեղեցիկ թորփիլա հալածներ, զորս կառավարութիւնը գնելու վրայ էր, գաղին աւելցան մեր հէք Սուլթան Օսմանին վրայ:

«Վստահ ենք թէ այս տողերը գրելով թարգմանել կ'ըլլանք բովանդակ օսմ. ազգին և կ'արտայայտենք դառնութեան և վշտի զգացումը, զոր բոլոր իսլամներն ունեցան Անգլիոյ այս վերջին արարքին հետեւանքով: Մեծն Բրիտանիա խորտակեց մեր սիրտը: Իր ընթացքը ուղղուած չէր ծովային նախարարութեան, ոչ ալ Բ. Դրան: Անիկա ուղղակի ուղղուած է ընդդէմ օսմ. ազգին: Անգլիա, առանց պէտք ունենալու, գրաւեց չորս մարտանակներ, որոնք այս վերջին տարւոյն մէջ անոր հետ իբր բարեկամ ապրելու համար ամէն զոհողութեան հաւանող կայսրութեան մը յոյսերը կը մարմնացնէին: Անգլիա նոյն իսկ հարկ չդատեց նկատի առնել այն ցաւագին ապաւորութիւնը, զոր պէս կարգադրութիւնը կրնար յառաջ բերել բովանդակ ազգի մը վրայ: Ասիկա անգամաւնելի կորուստ մըն է մեզի համար: Եւ այս գրաւումը կատարուեցաւ մեր զօրահանութեան 48 փամ առաջ: Անգլիոյ մէջ գտնուող մեր սպաները, այստեղ ամէն ոք և բոլոր իսլամական աշխարհը անիծեցին այս արարքը: Թող ամէն ոք անիծէ մեզ եթէ երբեք մոռնանք Անգլիոյ թշնամութիւնը:»

* * * Պատերազմի սկիզբէն ի վեր հրատարակուած հեռագիրներուն ամբողջութեան կ'երեւի թէ պատերազմի բոլոր դաշտերուն վրայ չպատահեցաւ պէտք եղածին պէս կարեւոր այն անուկ դէպք մը որ կարենայ ազդել սկսուած վիթխարի պայքարին վերջնական արդիւնքին վրայ: Աւստրաւերպ պատերազմին զայնով, որ ընդհ. կռիւն սկզբնապատճառը եղաւ, մինչեւ հիմա առնուած հակասական տեղեկութեանց արդիւնքէն կը տեսնուի թէ աւստրիական բանակը

չէ մտած Հին Սերպիոյ հողը՝ Աւստրեւմաճառ զօրքերը գեա չեն գրաւած Պելկրաաը։ Նոր Սերպիոյ մէջ է Նովի Պազարը, յուր չառնուեցաւ Աւստրիացիներուն յառաջխաղացումեան մասին։ Կարելի է այս տնգործութիւնը վերադրել այն իրողութեան թէ Աւստրիա հարկադրուեցաւ գիմադրելու Ռուսիոյ, որով սերպ բանակին դէմ սահմանապահ զօրքերը միայն թողուց։

Միւս կողմէն Սեւ Լերան ծովեզերքներուն պաշարումը վերցաւ, վասն զի աւստրեան նաւատորմը, անգլիէ-ֆրանսական նաւատորմին յարձակման սպառնալիքին տակ, հարկադրուեցաւ համախմբուել Ռուսիոյ առջեւ։ Ռուս սահմանազուլիին վրայ յայտնի է թէ գերման զօրքերը Լիհտստան մտան, սակայն պատճառն այն է որ հոս թշնամիին յառաջխաղացութիւնը արգելելու նպատակով հեծելազօրքեր միայն կան, որպէս զի ռուս բանակին համախմբումը կատարուի Բոֆտոյի, Կրասնոյի, Պրէսթ-Լիթովսքի գիծին վրայ, եւայլն, Վարշուայէն շատ դէպի ետեւ։

* Պերլին Օգոստոս 11. — Վոլօ. — Հակառակ օտար երկիրներու մէջ տարածուած սուտ լուրերուն ահաւանդիկ պատմական կարգը մինչեւ հիմա տեղի ունեցած դէպքերուն։

Մոլդով վրայ. — Պայթիկի մէջ Լիպաւ ռուս նաւահանդիսար ռմբակոծուեցաւ մերկներէն և նաւահանդիսար անգործածելի դարձաւ Գերմաններուն կողմէ այն տեղ գրուած ականներով։ Այս քաջագործութեանց միջոցին Գերմանները ո և է կորուստ չունեցան։ Հիւսիսային ծովուն մէջ գերման փոքր շոգե-նաւ մը գնաց ընդծովեայ ական դնել մինչեւ թէմիզի բերանը, ու այսպէս ընկղմեցաւ անգլ. Ամֆոն նոր յաժանաւը։ Իսկ Անգլիացիները ընկղմեցին ական դնող այս փոքր շոգենաւը։ Միջերկրականի մէջ ռմբակոծուեցան Ալժերիոյ եզերքը ամբողջաւ մէկ քանի դիրքեր և զինուորներու փոխադրութեան յատուկ նաւահանգիստներ, ու մեր ռմբակոծող նաւերը ունէ

կորուստ չունեցան։ Այս դէպքերը ցոյց կու տան թէ նաւային պատերազմն ալ ցամաքայինն նման կը յարմարի Գերմաններուն յարձակողական ոգիին։

Մեր քաջ նաւազները առաջացան մինչեւ թշնամիին եզերքները՝ իրենց հերոսական քաջագործութիւնները ընելու համար։ Հիւսիսային ծովուն մէջ ընդհարում տեղի աւնեցած և թշնամիներուն կողմէ մեր վրայ յաջողութիւն տարուած ըլլալուն, ինչպէս նաև այն բոլոր լուրերը թէ Լիէթ կատարելապէս մեր ձեռքը չի գտնուիր, սուտ են։

Գալով ցամաքային պատերազմական դէպքերուն, ի վեր կը հանենք մերկներուն կողմէ տարուած մեծ յաղթանակը ֆրանս. երեք զօրաւածիկ վրայ, որ Պել-ֆօրէն յառաջացել էին դէպի Միլհաուզի արեւմտակողմը. ետ մղեցինք թշնամին դէպի հարաւ մեծ կորուստներով, իսկ մենք ևս կորուստներ ունեցանք այս կռիւին մէջ։ Մեր սահմանազուլիին վրայ թշնամիին բոլոր յարձակումները ետ մղուեցան։ Ռուսներուն կորուստը կարեւոր է։ Մեր զօրքը անցաւ ռուս սահմանազուլիէն և հողեր գրաւեց։ Այս բոլոր յաղթանակներուն վրայ եկաւ աւելցաւ մեր զօրաց յաղթանակը ֆրանս. կիսարաւծի մը վրայ, որ Լոռէն մտած էր և մեծ կորուստով ետ մղուեցաւ ֆրանս. հող։ Թշնամիէն առինք 700 գերի, դրօշ մը, երկու հրետանի և չորս գնդացի։ Ֆրանսացի զօրավար մը սպաննուեցաւ այս կռիւին մէջ։

* Բարիզ 11. — Ֆրանսա պատերազմ հրատարակեց Աւստրիոյ դէմ։

* Բարիզ 11. — Ֆրանսական կառավարութիւնը յանձնեց անցագիրը Բարիզի աւստրեւմաճառական դեսպանին, որ արդէն երէկ իրիկուն մեկնեցաւ Բարիզէն։ Աւստրիական կառավարութիւնը յանձնեց Վիեննայի ֆրանս. դեսպանին անցագիրը, անոր խնդրանք։

* Պրիւսիա 11. — Քէօլի զինուորական շրջանակին վերին հրամանատարը դրօշի տակ կանչեց զէնք կրելու վիճակի մէջ եզրղ մէկ միլիոն զինուորները։ Կը կարծուի թէ այս զինուորները իրենց ամբողջ ջանքը պիտի թափեն ֆրանսական սահմանազուլիին վրայ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յորդոր Պիոս Ժ. Ս. Բաճանայապետի	513
Դէպքեր եւ սկզբունքներ	514
Հին վաեարձուդներ	515
Եօթնեակ Բրիստոնէի	517
Հաւատայ մի նոր յաղթանակը	518
Իմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	519
Կիլիսիա Բ. կայսեր Ս. Բաճանայապետին որկած ընծան	521
Այլեւայլ	522
Էթէն քերիզէտ տղա	524
Տեղեկագրական	526

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ



Տպարան Կ. Առաքելանց Շաքարաբերքի, Բերս, Պայրամ փողոց քիւ 5, Կ. Պալա

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ . արծ . վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ .— Արժանահ-
ման տար . Ծր . 10 . վեցամս . 5 .— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՑԷ .— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 . Պայրամ փողոց 5, 4 .

Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ .— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Բլիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, բարդեր, քարդ-ատրէաներ,
մահազոյներ, եւն. եւն.: Գիները անմեղքի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյտ գոհ-
ման:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek, Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Palements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.